ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՀԱՏԱԳՈՎԸ

Յ. ՇԱՀԱՄԻՐԵԱՆ
(«ՈՐՈԳԱՅԹ ՓԱՌԱՅ»)

Գրեց՝ ԻՐԱՋԵԿ

ԿՈԼԼԵԳԻԱՆԵՐԸ

Հանրապետութեան նախագահը իրեն կից չունի նախարարներ եւ նախարարական խորհուրդ — ներկայ իմաստով: Նրանց պաշտօնները թերեւս մասամբ կատարում են 12-ի եւ 6-ի խորհուրդները. սակայն աւելի եւ զուտ գործնական մասը՝ 3-ական անդամից բաղկացած այն 9 կոլլեգիաները, որոնց մասին խօսք եղաւ վերեւում:

Կոլլեգիաներից հինգը — լրտեսպետութիւն, զինապետութիւն, վառօդպետութիւն, կառապետութիւն եւ վրանապետութիւն — գլխաւորապէս ռազմական գործի համար են եւ զինուորական իշխանութեանը կից կամ օժանդակ. իսկ մնացած չորսը — կերակրապետութիւն, գանձապետութիւն, երկրաչափութիւն եւ պետ տկարաց ու աղքատաց — աւելի լայն, հասարակական բնոյթ ունին եւ ամբողջ երկրի համար են:

Թէ ինչպիսի վոխ-յարաբերութիւն ունին այդ կոլլեգիաները Ազգ. Ժողովի, հանր. նախագահի եւ իրենց ստորադաս պաշտօնեաների հետ — յայտնի չէ: Գուցէ կարելի էր ենթադրել, որ նրանք ներկայ նախարարութիւնների նման հիմնարկութիւններ են, բայց այդ դէպքում ոչ մի նմանութիւն չկայ նրանց եւ ներկայ նախարարութիւնների միջեւ:

Ամենից առաջ՝ խօսք լինել չի կարող այն մասին, թէ այդ կոլլեգիաները բոլորը միասին, որպէս մէկ հիմնարկութիւն, հեռաւոր նմանութիւն անգամ ունին այսօրուան կաբինէտի կամ նախարարական խորհրդի հետ: Կոլլեգիաները հաւաքական պատասխանատուութիւն չունին — ինչ որ պահանջւում է նախարարական խորհրդից: Դեռ աւելի. իւրաքանչիւր կոլլեգիայի իւրաքանչիւր անդամը պատասխանատու է միմիայն իր գործողութիւնների համար, այն էլ ոչ թէ ազգ. ժողովի կամ հանրապ. նախագահի առաջ, այլ դատարանի առաջ:

Միւս կողմից՝ կոլլեգիաներից իւրաքանչիւրը նախարարութիւններին յատուկ իշխանութեան լրութիւնը չունի. բոլոր կոլլեգիաները ենթակայ են ոչ միայն հանր. նախագահին եւ նրան կից գործող խորհուրդներին, այլ նոյնիսկ, որոշ դէպքում, նաեւ այս կամ այն նահանգի իշխանին կամ կուսակալին: Նրանք կամ նրանց անդամներից ամէն մէկը կարող են մինչեւ իսկ երկրի մայրաքաղաքում չլինել, այլ դուրսը, զանազան վայրերում:

Ցաճախ դուք այն տպաւորութիւնն էք ստանում, որ կոլլեգիաներից իւրաքանչիւրը հաւաքական մէկ մարմին չեն, այլ տարբեր շրջանների, բայց նոյն պաշտօնների պետերից կազմուած եռեակներ: Այսպէս, զինապետութեան նամակ-հրովարտակի մէջ կարդում ենք, որ Ջանասէր Սեղբեստրոսը նշանակւում է Անի քաղաքի զինապահեստների պահպանութեան պետ եւ պարտականութիւն ունի իր իշխանութեան տակ զինապահեստների մասին զեկուցանել քաղաքի իշխանին, ստանալ նրանից պակասութիւններ, հնազանդել նրան եւ յանձնել հարկաւոր քանակութեամբ զէնքեր՝ ում իշխանը կը հրամայի (կզ):

Կամ՝ կերակրապետը իւրաքանչիւր նահանգի չունեւորների համար պէտք է դիմի նահանգի իշխանին եւ նրա օգնութիւնը խնդրի, որպէսզի նրանք՝ չունեւորները՝ կարողանան իրենց հողերը մշակել եւ ցանել(h): Նոյնը նաեւ Տկարաց պետի վերաբերմամբ (hq) եւայլն:

Այս ամենից դուք տեսնում էք, որ կոլլեգիաների անդամները ցաճախ ներկայանում